

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Սահմանադրական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1905/B02 «ՀՀ Սահմանադրական իրավունք-2»

Որակավորման

աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ն. Այվազյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1905/B02. ՀՀ Սահմանադրական իրավունք – 2(5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 դասախոսություն, 16 սեմինար, 8 գործնական, 86 ինքնուրույն աշխատանք)

3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ ՀՀ պետական կառուցվածքի սահմանադրական հիմունքների, ՀՀ ընտրական իրավունքի և ընտրական համակարգի, ՀՀ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, իրավական վիճակի և գործունեության սահմանադրաիրավական հիմունքների մասին:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա

գիտելիք և իմացություն

- ա) Հայաստանի Հանրապետության կառուցվածքի, կառավարման ձևի և պետական ռեժիմի սահմանադրական հիմունքների,
- բ) ՀՀ ընտրական իրավունքի և ընտրական համակարգի բովանդակության, ընտրական գործընթացների կազմակերպման և անցկացման հիմնախնդիրների,
- գ) ՀՀ Նախագահի ինստիտուտի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կազմավորման, իրավական կարգավիճակի և գործունեության սահմանադրաիրավական հիմունքների,
- դ) ՀՀ սահմանադրական դատարանի, դատական իշխանության և դատախազության կազմակերպման, իրավական կարգավիճակի և գործունեության սահմանադրաիրավական հիմնախնդիրների,
- ե) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և իրավական վիճակի սահմանադրաիրավական հիմնախնդիրների մասին

Ունակ կլինի

- ա) ընկալելու Հայաստանի Հանրապետության, որպես ինքնիշխան պետության, գործող կառավարման ձևի և պետական ռեժիմի արդյունավետության չափանիշները, դրանց բարելավման անհրաժեշտության պատճառները և ուղղությունները,
- բ) յուրացնելու ՀՀ ընտրական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների բոլոր մանրամասներն ու նրբությունները, վեր հանել այդ ոլորտում առկա բացթողումներն ու թերությունները և տալ դրանց շտկման վերաբերյալ առաջարկություններ,
- գ) Տիրապետել ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության կողմից լիազորությունների իրականացման գործնական հմտություններին,
- դ) Աշխատանք կատարել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում, կազմել օրենքների նախագծեր և հանդես գալ որպես ներկայացված օրինագծերի փորձագետ,
- ե) Խորությամբ ընկալել պետական մարմինների համակարգում դատական իշխանության մարմինների տեղն ու դերը, քննարկումներ և բանավեճեր կազմակերպել Սահմանադրական դատարանի և դատական իշխանության մյուս մարմինների գործունեության և իրավական վիճակի հարաբերակցության հիմնախնդիրների վերաբերյալ,
- զ) Աշխատանք կատարել տեղական ինքնակառավարման մարմիններում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները (**առաջին ընթացիկ քննություն`** 1-5 թեմաներ, **երկրորդ ընթացիկ քննություն`** 6-10 թեմաներ) գրավոր են, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Քննության ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 30 թեստ, որը գնահատվում է առավելագույնը 2 միավոր, և 2 **տեսա-**

գործնական առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 1 միավոր: Միավորի քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է:

Պասընթացի նկարագրությունը, բովանդակությունը

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի սահմանադրական հիմունքները

Թեմա 1

Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հայաստանի Հանրապետության տարածքը: Պետական տարածքի և պետական սահմանի բովանդակությունը: Պետական սահմանի պահպանությունը, ռեժիմը և սահմանային գոտին:
2. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն: Ազգային փոքրամասնությունների, պետական և ոչ պետական հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները:
3. Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները: Դրանց բնութագրությունը, կիրառական նշանակությունը և կիրառման ոլորտները:
4. Հայաստանի Հանրապետության մաքսային, դրամական և հարկային համակարգերը, որպես պետության պարտադիր ատրիբուտներ:
5. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային միավորումներին:

Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:

Հարցեր 1-3 և 5 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:

Հարց 4 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և Հայաստանի Հանրապետության օրենքներին՝ տվյալ հարցի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012):

Թեմա 2

Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի սահմանադրական հիմունքները (2 ժամ դասախոսություն)

1. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները: Կառավարման ձևի հասկացությունը (լայն և նեղ առումներով), տեսակները և դրանց բովանդակությունը: Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի (նախագահականին և խորհրդարանականին հատուկ) բնորոշ գծերը:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը: Վարչատարածքային միավորների կազմակերպման հիմնական սկզբունքները:

3. Հայաստանի Հանրապետության պետական ռեժիմը: Պետական ռեժիմի (լայն և նեղ առումով) բովանդակությունը և տեսակները (խթանելը, թույլատրելը, պաշտպանելը, պահանջելը, արգելելը):
4. Հայաստանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերը:

Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են թեմայի վերաբերյալ գրականությանը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012) և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման:

Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և օրենսդրական ակտերին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինները

Թեմա 3

Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների համակարգը (2 ժամ դասախոսություն)

1. Պետական իշխանությունը որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ: Պետական իշխանության աղբյուրի, կառուցվածքի (միասնությունը և բաժանումը), պետական մարմինների մասին Սահմանադրության նորմերը:
2. Պետական իշխանության մարմնի հասկացությունը: Պետական իշխանության մարմինների բնորոշ գծերը (պետական ապարատի բաղկացուցիչ մասն են, կազմավորվում են հատուկ կարգով, օժտված են պետաիշխանական լիազորություններով, մասնակցում են պետության խնդիրների իրականացմանն, ունեն գործունեության հատուկ կարգ), որոնցով տարբերվում են ոչ պետական կազմակերպություններից ու մարմիններից:
3. Պետական մարմինների տեսակները և գործունեության սահմանադրաիրավական առանձնահատկությունները (կազմակերպման, կառուցվածքի, իրավական վիճակի և գործունեության առումով):

Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:

Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012)՝ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեմա 4

Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը (8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը: Ընտրական իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ դրսևորումները: Ընտրական համակարգի հասկացությունը (լայն և նեղ առումով): Ընտրական համակարգի տեսակները և դրանց բովանդակությունը:
2. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները: Ընդհանուր ընտրական իրավունքի իրականացման ժամանակ պահանջվող ցենզերը: Ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի իրացումը բացառող հանգամանքները:

3. Ընտրական գործընթացի փուլերը. (նախապատրաստական, քվեարկության, ձայների հաշվման և արդյունքների որոշման), դրանց բովանդակությունը:
4. Ընտրությունների նախապատրաստումը:
 - Ա) Ընտրություններ նշանակելը: Ընտրովի մարմինների առանձին տեսակների հերթական և արտահերթ ընտրությունների, երկրորդ փուլի նշանակման կարգը և ժամկետները:
 - Բ) Ընտրողների ցուցակներ, ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմելու կարգը: Հիմնական ցուցակներ, լրացուցիչ ցուցակներ, զինվորական մասերում և կալանավայրերում ընտրական ցուցակներ կազմելու և դրանցում տեղ գտած անճշտությունները բողոքարկելու կարգը:
 - Գ) Ընտրական հանձնաժողովները: Դրանց տեսակները, կազմակերպման կարգը, լիազորությունները, հանձնաժողովի անդամների կարգավիճակը, գործունեության երաշխիքները:
 - Դ) Թեկնածուների առաջադրումը, գրանցումը և իրավական վիճակը: ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության և տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուների առաջադրման և գրանցման կարգը: Գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու, այն բողոքարկելու հիմքերն ու կարգը: Թեկնածուների անձեռնմխելիության իրավունքը:
 - Ե) Նախընտրական քարոզչությունը: Դրա իրականացմանը ներկայացվող պահանջները (հավասար հիմունքներով դահլիճներից, լրատվամիջոցներից օգտվելը) և դրանց խախտման համար սահմանված պատասխանատվության միջոցները:
 - Զ) Ընտրությունների ֆինանսավորումը: Նախընտրական հիմնադրամը, դրա իրացման և վերահսկման կարգը:
5. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը (քվեաթերթիկների, քվեախցերի, քվեատուփերի, կնիքների պատրաստումը և բաշխումը): Արտասահմանում ապրող կամ գտնվող, ձերբակալված, կալանքի տակ գտնվող անձանց՝ քվեարկությանը մասնակցելու կարգը: Քվեարկության գործընթացին և մասնակից քաղաքացիներին ներկայացվող պահանջները:
6. Ձայները հաշվելու, քվեարկության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը: Ձայներ հաշվելու և անճշտությունների չափը որոշելու կարգը: Ամփոփիչ արձանագրության պարտադիր տվյալները: Ընտրությունները չկայացած կամ արդյունքները անվավեր ճանաչելու հիմքերը: Կրկնական քվեարկության և վերաքվեարկության կազմակերպման կարգը: Քվեարկության արդյունքների վերաբերյալ վեճերը լուծելու կարգը:
7. Պատասխանատվությունը քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար: Խախտումների տեսակները և դրանց վերաբերյալ իրավական պատասխանատվության միջոցների կիրառումը:

Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են գրականությանը («ՀՀ Սահմանադրական իրավունք» դասագրքի 19-րդ գլուխ) և ՀՀ ընտրական օրենսգրքին (2011թ. մայիսի 26-ին ընդունված) ու խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման:

Հարցեր 4-6 – սեմինար պարապմունք. ուսանողները քննարկում են խնդրահարույց հարցերը:

Հարցեր 1-3 և 7 - գործնական պարապմունք. ուսանողները նախօրոք ծանոթանում են հարցերի վերաբերյալ գրականությանը և ՀՀ օրենսդրական ակտերին ու քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը:

Հարց 4 («ա»-«զ» կետեր) – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, օրենսդրական ակտերին և ԿԸՀ-ի որոշումներին, նախապատրաստում են թեկնածուների առաջադրման փաստաթղթերը, ծանոթանում են ընտրական ցուցակները կազմելու կարգին և կազմակերպում խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 5
Հայաստանի Հանրապետության Նախագահը
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում: Նրա կարգավիճակի առանձնահատկությունները: Նախագահի փոխհարաբերությունները պետական իշխանության տարբեր թևերի մարմինների հետ:
2. Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության և նրա լիազորությունների դադարման կարգը: Նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները: Հանրապետության Նախագահի պարտականությունների դադարման հիմքերը և եղանակները:
3. Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները: Այդ լիազորությունների իրականացման ոլորտները (որպես պետության գլուխ, օրենսդիր իշխանության բնագավառում, կառավարման խնդիրների լուծման ոլորտում, դատական իշխանության հետ կապված, որպես զինված ուժերի գերագույն հրամանատար):
4. Հայաստանի Հանրապետության Նախագահի ակտերը և աշխատակազմը: Ակտերի տեսակները և իրավաբանական ուժը: Աշխատակազմի կազմակերպման կարգը, կառուցվածքը և գործունեությունը:

Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն : Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012) և հետաքրքրող հարցերը ներկայացնում քննարկման:

Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման եղանակով:

Հարց 4 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են Հանրապետության Նախագահի աշխատակազմի կազմակերպման և գործունեության կարգին, նախագահի ակտերի նախագծերի նախապատրաստման եղանակներին և կազմակերպում քննարկում (ՀՀ Նախագահի աշխատակազմի կանոնադրություն, աղբյուրը՝ www.arlis.am):

Թեմա 6
Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը
(8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության պառլամենտն է, նրա ներկայացուցչական և օրենսդիր մարմինը: Պառլամենտարիզմի բովանդակությունը կազմող հատկանիշները (ներկայացուցչությունը, օրենսդրական գործունեությունը և օրինականությունը):
2. Ազգային ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը: Աժ նախագահի, տեղակալների, մշտական հանձնաժողովների՝ որպես Աժ կառուցվածքային ստորաբաժանումների, ընտրության կարգը, իրավական վիճակը և աշխատանքի կազմակերպումը: Պատգամավորական խմբերի ու խմբակցությունների կազմակերպման և լուծարման կարգը, իրավական վիճակը:
3. Ազգային ժողովի պատգամավորը ժողովրդի ներկայացուցիչն է Աժ-ում և Ազգային ժողովի ներկայացուցիչն է բնակչության շրջանում: Պատգամավորի լիազորությունների ծագման և դադարման հիմքերը: Պատգամավորի գործունեության կազմակերպումը Ազգային ժողովում (նրա օրենսդրական նախաձեռնության, հարցման և

- հարցապնդման իրավունքի իրականացման առանձնահատկությունները) և բնակչության շրջանում: Նրա գործունեության երաշխիքները:
4. Ազգային ժողովի հանձնաժողովները, նրանց բնութագիրը, տեսակները, կազմակերպման կարգը և կառուցվածքը: Մշտական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման ձևերը:
 5. Ազգային ժողովի իրավասությունը: Անսահմանափակ, բացարձակ սահմանափակ և հարաբերական սահմանափակ իրավասության խորհրդարաններ: Աժ գործունեության հիմնական ուղղությունները (օրենսդրության, ֆինանսների, արտաքին հարաբերությունների, պաշտպանության և ազգային անվտանգության, պետական մարմինների ձևավորման, վերահսկողության և այլ ոլորտներում):
 6. Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման ձևերը: Նստաշրջանը (դռնբաց և դռնփակ) Աժ աշխատանքի կազմակերպման գլխավոր ձևն է: Հերթական և արտահերթ նստաշրջաններ: Անդրամիկ նստաշրջանի առանձնահատկությունները: Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպումը պատգամավորների և մշտական հանձնաժողովների գործունեության միջոցով:
 7. Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում: Օրենսդրական գործընթացի փուլերը: Դրանցից յուրաքանչյուրի կազմակերպման բովանդակությունը և առանձնահատկությունները: Օրինագծի քննարկման ընթերցումների առանձնահատկությունները:
 8. Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը (օրենսդրության վերլուծության վարչության, արտաքին հարաբերությունների, արարողակարգի, հասարակության հետ կապերի վարչությունների, քարտուղարության, ընդունարանի, գործերի կառավարչության և այլն) կազմակերպման և գործունեության կարգը:

Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանն (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012) ու Աժ Կանոնակարգ օրենքին և պարզաբանման անհրաժեշտություն ունեցող հարցերը ներկայացնում են քննարկման:

Հարցեր 3, 4, 6, 7 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման եղանակով:

Հարցեր 1, 2, 5, 8 - գործնական պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են թեմայի վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին և կազմակերպում խնդրահարույց հարցերի քննարկում:

Հարցեր 1 և 8 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են պառլամենտարիզմի վերաբերյալ գրականությանը, Աժ աշխատակազմի վերաբերյալ տեսական աղբյուրներին և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների և սեմինար պարապմունքների ժամանակ (աղբյուր՝ www.arlis.am):

Թեմա 7
Հայաստանի Հանրապետության կառավարությունը
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում: Նրա գործունեության գործադիր և կարգադրիչ բնույթը:
2. Կառավարության կազմավորման կարգն ու կառուցվածքը: Կառավարությանն անվստահություն հայտնելու հիմքերը և կարգը: Վարչապետի կարգավիճակը:
3. ՀՀ կառավարության իրավասությունը: Նրա լիազորությունների իրականացման (բյուջեի ձևավորման, պետական սեփականության կառավարման, ֆինանսատնտեսական, վարկային և հարկային քաղաքականության, արտաքին տնտեսական կապերի, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության, բնության

պահպանության, պաշտպանության, ազգային անվտանգության, օրինականության ամրապնդման) բնագավառները:

4. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը: Կառավարության աշխատանքների կազմակերպման կոլեգիալ և անհատական ձևերը: Կառավարության աշխատակազմը:
5. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը: Կառավարության և վարչապետի ակտերի տեսակները, դրանց ընդունման կարգը և իրավաբանական ուժը:
6. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը: Մարզպետի իրավական վիճակը: Մարզի խորհուրդը:

Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով: Ուսանողները թեմայի գրականության և նորմատիվ իրավական ակտերի հետ նախօրոք ծանոթության արդյունքում ներկայացնում են քննարկման իրենց հետաքրքրող հարցերը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012):

Հարցեր 2,4 և 6 – սեմինար պարապմունք խնդրահարույց հարցերի քննարկման եղանակով:

Հարցեր 1,3 և 5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և նորմատիվ ակտերին՝ այնուհետև սեմինար պարապմունքների ժամանակ քննարկում խնդրահարույց հարցերը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012):

Թեմա 8

Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և դատախազության սահմանադրական հիմունքները (4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1. Դատական իշխանության ընդհանուր (սահմանադրական) և հատուկ սկզբունքները: Ընդհանուր սկզբունքներից յուրաքանչյուրի (գործադիր իշխանության վերահսկողությունը, անկախությունը քաղաքական ճնշումներից, արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից և այլն) բովանդակությունը: Հատուկ սկզբունքների տեսակները և բովանդակությունը: Արդարադատության իրականացման ձևերը:
2. Դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը: Առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների իրավական վիճակը: Դատարանների նախագահների խորհրդի կարգավիճակը:
3. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը: Նրանց իրավական վիճակի հիմնական սկզբունքները (անկախությունը, ապաքաղաքականացվածությունը, այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, անփոփոխելիությունը, անձեռնմխելիությունը, նյութական ապահովվածությունը): Դատական ծառայողների ինստիտուտը:
4. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները: Դատախազության կառուցվածքը, կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքները: Դատախազության իրավական վիճակը: Դատախազի գործունեության երաշխիքները:
5. Փաստաբանական ծառայությունը և դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները: Փաստաբանական ծառայության բովանդակությունը և երաշխիքները: Դատական իշխանությանը աջակցող մյուս մարմինները:

Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:

Չարդեր 1,3-5 - գործնական պարապմունք: Ուսանողները ուսումնասիրում են հարցերի վերաբերյալ տեսական և նորմատիվ աղբյուրները և հետաքրքրություններ կայացնող հարցերը ներկայացնում քննարկման:

Չարդ 1 –ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են դատական իշխանության ընդհանուր (սահմանադրական) ու հատուկ սկզբունքների վերաբերյալ գրականությանը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012) և նորմատիվ իրավական ակտերին և հանգուցային հարցերը ներկայացնում քննարկման՝ դասախոսությունների և սեմինար պարապմունքների ժամանակ:

Թեմա 9

Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության համակարգում: Սահմանադրական վերահսկողության բնորոշ գծերը: Սահմանադրական արդարադատության զարգացման փուլերը:
2. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմակերպման կարգն ու անկախության երաշխիքները: Սահմանադրական դատարանների դասակարգումը ըստ լիազորությունների բնույթի: Սահմանադրական վերահսկողության օբյեկտների և դիմող սուբյեկտների կազմը: Սահմանադրական դատարանների կազմակերպման կարգը և անկախության երաշխիքները: Սահմանադրական դատարանի անդամներին ներկայացվող պահանջները: Նրանց նշանակման կարգն ու ժամկետները: ՀՀ Սահմանադրական դատարանի կազմակերպման կարգը:
3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը: Նախնական և հետագա, կոնկրետ և վերացական, պարտադիր և ֆակուլտատիվ, ըստ ձևի և ըստ բովանդակության վերահսկողությունների բովանդակությունը:
4. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դրանց իրականացման առանձնահատկությունները: ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները: Գործի քննության առանձնահատկությունները: Դատարան դիմելու և դիմումը ետ վերցնելու կարգը:
5. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու առանձնահատկությունները: Դատավարության ընթացակարգի երկու փուլերը: Գործի քննության առանձնահատկությունները: Դատավարության կողմերի իրավունքներն ու պարտականությունները:
6. Սահմանադրական դատարանի ակտերը:

Չարդեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից բարձրացված հարցերին:

Չարդեր 1,3,5 - անցկացվում է սեմինար պարապմունք:

Չարդեր 2,4,6 - գործնական պարապմունք: Ուսանողները ծանոթանում են թեմայի վերաբերյալ գրականությանը, ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքին (2006թ.), թեմայի հարցերին առնչվող Սահմանադրական դատարանի ակտերին և քննարկում առավել հետաքրքրություն ներկայացնող հարցերը (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012):

Չարդ 5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են Սահմանադրական դատարանի կողմից դիմումների ընդունման, քննության նախապատրաստման և գործերի քննարկման կարգի առանձնահատկություններին և խնդրահարույց հարցերը

ներկայացնում քննարկման դասախոսության ժամանակ (աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012, ՀՀ ՍԴ մասին օրենք – www.concourt.am):

Թեմա 10

Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները (2 ժամ դասախոսություն)

1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:
2. Տեղական ինքնակառավարման համակարգը: Այդ համակարգի հիմնական տարրերը (ինքնակառավարման մարմինները, միջհամայնքային միավորումները, համայնքային մարմինների ընտրությունները):
3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Սեփական (պարտադիր և կամավոր) և պետության կողմից փոխանցված լիազորությունների բովանդակությունը և առանձնահատկությունները: Համայնքի ավագանու և ղեկավարի լիազորությունները:
4. Տեղական ինքնակառավարման երաշխիքները: Ընդհանուր (տնտեսական, քաղաքական և հոգևոր) և հատուկ (իրավական) երաշխիքների բովանդակությունը:

Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Քննարկվում է ուսանողների կողմից ներկայացվող հարցերը, որոնք առաջացել են «Մունիցիպալ իրավունք» դասընթացի դասավանդման ընթացքում:

Հարցեր 1-4 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությանն ու գրականությանը և խնդրահարույց հարցերը քննարկում դասախոսության ժամանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԲՈՒՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա/ տեսական գրականություն

1. **Авакьян С.А.** Конституционное право. Энциклопедический словарь. Изд. "Норма", М., 2000.
2. **Авакьян С.А.** Конституционное право России. В 2-х томах. М., 2006.
3. **Автономов А.С.** Конституционное (государственное) правозарубежных стран. М., 2005.
4. **Баглай М.Б.** Конституционное право Российской Федерации. М., 2005.
5. Государственное право Германии /издатели: И. Изензее, П. Кирххов/. В 2-х томах, М., 1994.
6. **Енгибарян Р.В.** Сравнительное конституционное право. М., 2005
7. **Енгибарян Р.В.** Конституционное развитие в современном мире. М., 2007.
8. **Зиновьев А.В.** Конституционное право России: проблемы теории и практики. М., 2000.
9. **Козлова Е.И., Кутафин О. Е.** Конституционное право России. М., 2006.
10. Конституционное /государственное/ правозарубежных стран /под ред. проф. Страшуна Б. А./ В 4-х томах. Том 1, М., 1993, том 2 М., 1995, том 3, М., 1998.
11. **Маклаков В.В.** Конституционное правозарубежных стран (Общая часть). М., 2006.
12. Сравнительное конституционное право /отв. ред. проф. Чиркин В. Е./ М., 2002.
13. **Խաչատրյան Հ.Ս.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1997:
14. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012:

բ/ նորմատիվ ակտեր

1. Հռչակագիր «Հայաստանի անկախության մասին» /ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին/:
2. ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» /ընդունվել է 1991 թ. սեպտեմբերի 23-ին/:
3. «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը /ընդունվել է 1991թ. սեպտեմբերի 25-ին/ :
4. Հայաստանի Հանրապետության 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ու լրացումներով):
5. Конституция зарубежных государств /составитель и автор введения и вступительных статей проф. Маклаков В.В./ Изд. "БЕК", М., 1997.
6. Конституции государств Европейского Союза /поряд. Окунькова Л. А. и др./ Изд. группа ИНФРА. М-НОРМА, М., 1997.
7. Конституции государств Европы: В 3 т. М., 2001.
8. Новые конституции стран СНГ и Балтии. Изд "Юристъ", М., 2000.
9. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995 թթ./ Երևան, 1995:
10. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1995-1999/: Գիրք «Ա և «Բ»: Երևան, 1999:

2. ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի սահմանադրական հիմունքները

ա/ տեսական գրականություն

1. **Այվազյան Ն.Ա.**, Ազգային պետական կառուցվածքի հետազա զարգացումը ԽՍՀՄ-ում: Երևան, 1989:
2. **Винсент Остром.** Смысламериканского федерализма. (Перевод с английского-Общая ред. и предисловие докт. юрид. наук Обломского А.В.). Изд. "АРЕНА", М., 1993.
3. Сравнительное конституционное право. М., 1996.
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևան, 2012:

բ/ նորմատիվ ակտեր

1. Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով):
2. Конституции государств Европейского Союза /под общей ред. и сопоставительной статьей Окунькова Л.А./ Изд. группа ИНФРА. М-НОРМА, М., 1997.
3. Конституции стран СНГ и Балтии. /Составитель сборника, автор введения и вступительных статей канд. юрид. наук, доцент Андреева Г. Н./ Изд. «Юристъ», М., 1999.

4. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքը /ընդունվել է 15.10.2006թ./ :
5. «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» օրենքը /ընդունվել է 15.10.2006թ./:
6. «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» օրենքը /ընդունվել է 15.10.2006թ./:
7. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը /ընդունվել է 17.04.1993թ./:
8. «Հայաստանի Հանրապետության վարչատառչաձևային բաժանման մասին» օրենքը /ընդունվել է 07.11.1994թ./ :
9. «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» օրենքը /ընդունվել է 20.11.2001թ./ :
10. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքը /ընդունվել է 30.06.1996թ./ :
11. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը /ընդունվել է 02.05.1997թ./ :
12. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը /ընդունվել է 09.01.1998թ./:
13. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը /ընդունվել է 10.01.1998թ./:
14. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը /ընդունվել է 06.07.2000թ./:
15. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին):

3.ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինները ա/ տեսական գրականություն

1. **Авакьян С.А.** Конституционно-правовая Россия. Том 1 и 2. М., 2006.
2. **Алексеев С.С.** Право. Законы, правосудие, юриспруденция в жизни людей. Изд. «Норма», М., 2000.
3. **Арутюнян А.Ш.** Институт президента Республики Армения /сравнительный правовой анализ/. Ереван, 1996.
4. **Այվազյան Վ.** Հայաստանի Հանրապետությունում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի վերաբերյալ պարզաբանումներ: Երևան, 2004:
5. **Галузо В.Н.** Система правоохранительных органов России. Учебник для вузов. Изд. «ЮНИТИ», М., 2000.
6. **Ս. Դիլբանդյան**, ՀՀ դատախազությունը և իրավապահ մարմինները: Երևան, 2006թ:
7. **Եղյան Ռ. Հ.** Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը : Ուսումնական ձեռնարկ: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2000:
8. **Качалова А.А.** Судебная система РФ в схемах и таблицах. Изд. «ПРИОР», М., 2000.
9. **Маклаков В.В.** Парламенты стран-членов Европейского Союза. М., 1994.
10. Местное самоуправление в России : состояние, проблемы и перспективы. Изд. Московского университета, 1994.
11. **Հարությունյան Ա. Շ.** Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Դասագիրք բուհերի համար : Երևան, 2004 :
12. **Հարությունյան Գ. Գ.** Սահմանադրական վերահսկողություն /համեմատական վերլուծություն/ : Երևան, «Նժար», 1997:
13. Հարությունյան Գ. Գ. Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Երևան, «Նժար», 2002:
14. Правоохранительные органы и судебная система. Изд. « ПРИОР », М., 2000.
15. Прокурорский надзор. Практикум. Изд. « Юридическая литература », М., 2000.
16. **Сахаров Н.А.** Институт президентства в современном мире. М., 1994.
17. **Шмавонян Г.А.** Конституционно-правосудие в системе разделения властей. М., 2001.

բ/ նորմատիվ ակտեր

(ներկայացվում են առ 30.04.2013թ. փոփոխություններով և լրացումներով)

1. Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով):
2. ՀՀ ընտրական օրենսգիրքը /ընդունվել է 26.05.2011թ./:
3. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը» /ընդունվել է 21.02.2002թ. փետրվարի 21-ին/:
4. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը» /ընդունվել է 10.12.2007թ. դեկտեմբերի 10-ին/:
5. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1995թ. նոյեմբերի 6-ին),
6. «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. մայիսի 29-ին),
7. «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 7-ին),
8. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 3-ին),

9. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին),
10. «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. փետրվարի 3-ին),
11. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),
12. «Պատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),
13. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. սեպտեմբերի 16-ին),
14. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. նոյեմբերի 11-ին),
15. «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. մարտի 3-ին),
16. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 14-ին),
17. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին),
18. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. հոկտեմբերի 12-ին),
19. «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. նոյեմբերի 24-ին),
20. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. ապրիլի 4-ին),
21. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. հուլիսի 06-ին),
22. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. նոյեմբերի 6-ին),
23. «Արհեստական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. դեկտեմբերի 25-ին),
24. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. մարտի 7-ին),
25. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին),
26. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. հունիսի 26-ին),
27. «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. սեպտեմբերի 26-ին),
28. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 24-ին),
29. «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 23-ին),
30. «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. նոյեմբերի 20-ին),
31. «Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. նոյեմբերի 20-ին),
32. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին),
33. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին),
34. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. ապրիլի 3-ին),
35. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին),
36. «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. մայիսի 17-ին),
37. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
38. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
39. «Զինվորական ծառայության անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
40. «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
41. «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հոկտեմբերի 8-ին),

42. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 11-ին),
43. «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. ապրիլի 11-ին),
44. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին),
45. «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 13-ին),
46. «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին),
47. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին),
48. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին),
49. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին),
50. «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. հունիսի 11-ին),
51. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին),
52. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին),
53. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին),
54. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին),
55. «Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 15-ին),
56. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. հուլիսի 1-ին),
57. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին),
58. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին),
59. «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին),
60. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին),
61. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին),
62. «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին),
63. «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. ապրիլի 12-ին),
64. «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. հունիսի 17-ին),
65. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 18-ին),
66. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 26-ին),
67. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2009թ. ապրիլի 4-ին),
68. «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2009թ. հոկտեմբերի 7-ին),
69. «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին),
70. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին),
71. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին),
72. Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագիրը,
73. Հանրապետության Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագիրը:

Հարցաշար

ՀՀ սահմանադրական իրավունք դասընթացի առաջին միջանկյալ քննության

1. Հայաստանի Հանրապետության տարածքը:
2. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն:
3. Հայաստանի Հանրապետության զինանշանի բնութագրությունը և կիրառական նշանակությունը:
4. Հայաստանի Հանրապետության պետական դրոշի բնութագրությունը և կիրառական նշանակությունը:
5. Հայաստանի Հանրապետության օրհներգի բնութագրությունը, կատարման դեպքերը, վայրերը և ժամանակը:
6. Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը:
7. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային համակարգերը:
8. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային միավորումներին:
9. Կառավարման հանրապետական ձևի տեսակները և դրանց առանձնահատկությունները:
10. Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը և դրա բնութագիրը:
11. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը և դրա կազմակերպման սկզբունքները:
12. Հայաստանի Հանրապետության պետական ռեժիմը:
13. Հայաստանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերը:
14. Պետական իշխանությունը սահմանադրական իրավունքի ինստիտուտէ:
15. Պետական իշխանության կառուցվածքի բովանդակությունը:
16. Պետական իշխանության մարմնի բնորոշ գծերը:
17. Պետական իշխանության մարմնի հասկացությունը:
18. Պետական մարմինների առանձին տեսակների գործունեության առանձնահատկությունները:
19. Պետական մարմինների առանձին տեսակների կազմակերպման առանձնահատկությունները:
20. Պետական մարմինների առանձին տեսակների իրավական վիճակի առանձնահատկությունները:
21. Ընտրական իրավունքի հասկացությունը և դրսևորման եղանակները:
22. Ընտրական համակարգի հասկացությունը և դրսևորման եղանակները:
23. Ընտրական համակարգի հասկացությունը և տեսակները:
24. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը:
25. Ընտրական իրավունքի ընդհանուր և հավասար սկզբունքների բովանդակությունը:
26. Ընտրական իրավունքի ուղղակի և գաղտնի քվեարկության սկզբունքների բովանդակությունը:
27. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները:
28. Ընտրություններ նշանակելը:
29. Ընտրողների ցուցակներ կազմելը:
30. Ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր, և տեղամասային կենտրոններ կազմելու կարգը:
31. Ընտրական հանձնաժողովների կազմակերպման կարգը, գործունեությունը և իրավական կարգավիճակը:
32. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմակերպման կարգը, իրավական վիճակը և գործունեությունը:
33. Ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովների կազմակերպման կարգը, իրավական վիճակը և աշխատանքի կազմակերպումը:
34. Թեկնածուի առաջադրումը, գրանցումը և իրավական վիճակը:
35. Թեկնածուի առաջադրման կարգը:

36. Թեկնածուի գրանցման, գրանցումը մերժելու և անվավեր ճանաչելու կարգը:
37. Թեկնածուի իրավական կարգավիճակը:
38. Նախընտրական քարոզչությունը:
39. Ընտրությունների ֆինանսավորումը:
40. Նախընտրական հիմնադրամի ձևավորման և իրացման կարգը:
41. Ընտրությունների ավարտից հետո հիմնադրամում մնացած միջոցները և ընտրագրավը վերադարձնելու հետ կապված խնդիրների լուծման կարգը:
42. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը:
43. Քվեարկության կազմակերպման կարգը:
44. Քվեարկության անցկացման կարգը:
45. Չայները հաշվելու կարգը:
46. Քվեարկության արդյունքները ամփոփելու կարգը:
47. Քվեարկության արդյունքները որոշելու կարգը:
48. Պատասխանատվությունը քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար:
49. ՀՀ Նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում:
50. Պետության գլխի կարգավիճակը պայմանավորող հանգամանքները:
51. ՀՀ Նախագահի ընտրության և պաշտոն զբաղեցնելու կարգը:
52. ՀՀ Նախագահի լիազորությունների դադարման հիմքերը և կարգը:
53. ՀՀ Նախագահի, որպես պետության գլխի, լիազորությունները:
54. ՀՀ Նախագահի լիազորությունները օրենսդիր իշխանության ոլորտում:
55. ՀՀ Նախագահի լիազորությունները արտաքին հարաբերությունների ոլորտում:
56. ՀՀ Նախագահի լիազորությունները կառավարման խնդիրների լուծման ոլորտում:
57. ՀՀ Նախագահի լիազորությունները դատական իշխանության ոլորտում:
58. ՀՀ Նախագահի լիազորությունները զինված ուժերի և արտակարգ իրավիճակների ոլորտում:
59. ՀՀ Նախագահի ակտերը և աշխատակազմը:
60. ՀՀ Նախագահի վետոյի և խորհրդարանը լուծարելու իրավունքը:

Հարցաշար

ՀՀ սահմանադրական իրավունք դասընթացի երկրորդ միջանկյալ քննության

1. Պառլամենտարիզմի բովանդակությունը կազմող հիմնական հատկանիշները:
2. ՀՀ օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմինը Ազգային ժողովն է:
3. Աժ կազմակերպման կարգն ու կառուցվածքը:
4. Աժ պատգամավորը հանրապետության ողջ բնակչության ներկայացուցիչն է:
5. Աժ պատգամավորը իր ընտրատարածքի ներկայացուցիչն է Աժ-ում:
6. Պատգամավորի լիազորությունների ծագման և դադարման հիմքերը:
7. Պատգամավորի կարգավիճակը Աժ-ում և ընտրատարածքում:
8. Պատգամավորի գործունեության երաշխիքները:
9. Ազգային ժողովի հանձնաժողովները /կարգավիճակը, կազմակերպման կարգը և աշխատանքի կազմակերպման ձևերը/:
10. Աժ գործունեությունը ֆինանսների ոլորտում:
11. Աժ գործունեությունը արտաքին հարաբերությունների և ազգային անվտանգության ոլորտում:

12. Աժ գործունեությունը պետական մարմինների ձևավորման և պաշտոնատար անձանց նշանակման ոլորտում:
13. Աժ լիազորությունները պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության վերահսկողության ոլորտում:
14. Նստաշրջանը Աժ աշխատանքների կազմակերպման գլխավոր ձևն է:
15. Օրենքների նախագծերի նախապատրաստման կարգը:
16. Օրենքների նախագծերի քննարկման կարգը Ազգային ժողովում:
17. Օրենքների ընդունման, ստորագրման և հրապարակման կարգը:
18. Աժ աշխատակազմը:
19. ՀՀ կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում:
20. ՀՀ կառավարության կազմակերպման կարգն ու կառուցվածքը:
21. ՀՀ կառավարության իրավասությունը կրթության և առողջապահության ոլորտում:
22. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը:
23. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը:
24. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:
25. Դատական իշխանության ընդհանուր սկզբունքները:
26. Դատական իշխանության մարմինների համակարգը և իրավական կարգավիճակը:
27. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը:
28. Դատավորների անկախության երաշխիքները:
29. ՀՀ դատախազության կազմակերպման կարգը և կառուցվածքը:
30. ՀՀ դատախազության իրավական վիճակի սահմանադրական հիմունքները:
31. ՀՀ արդարադատության խորհրդի կազմակերպման կարգը և իրավական կարգավիճակը:
32. Փաստաբանական ծառայության կազմակերպման և գործունեության կարգը:
33. Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության հասկացությունը և հարաբերակցությունը:
34. Սահմանադրական արդարադատության զարգացման փուլերը:
35. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը:
36. Սահմանադրական դատարանի կազմակերպման կարգն ու անկախության երաշխիքները:
37. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը:
38. Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման առանձնահատկությունները:
39. Սահմանադրական դատավարության ընթացակարգի առանձնահատկությունները:
40. Սահմանադրական դատարանի ակտերի ընդունման կարգն ու իրավաբանական ուժը:
41. Տեղական ինքնակառավարման հասկացությունը և բովանդակությունը:
42. Տեղական ինքնակառավարման համակարգը:
43. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տեսակները և բովանդակությունը:
44. Տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացման երաշխիքները:

Հարցաշար

ՀՀ սահմանադրական իրավունք դասընթացի եզրափակիչ քննության

1. Հայաստանի Հանրապետության տարածքը:
2. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն:
3. Հայաստանի Հանրապետության զինանշանի բնութագրությունը և կիրառական նշանակությունը:
4. Հայաստանի Հանրապետության պետական դրոշի բնութագրությունը և կիրառական նշանակությունը:
5. Հայաստանի Հանրապետության օրհներգի բնութագրությունը, կատարման դեպքերը, վայրերը և ժամանակը:
6. Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը:
7. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային համակարգերը:
8. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային միավորումներին:
9. Կառավարման հանրապետական ձևի տեսակները և դրանց առանձնահատկությունները:
10. Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը և դրա բնութագիրը:
11. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը և դրա կազմակերպման սկզբունքները:
12. Հայաստանի Հանրապետության պետական ռեժիմը:
13. Հայաստանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերը:
14. Պետական իշխանությունը սահմանադրական իրավունքի ինստիտուտները:
15. Պետական իշխանության կառուցվածքի բովանդակությունը:
16. Պետական իշխանության մարմնի բնորոշ գծերը:
17. Պետական իշխանության մարմնի հասկացությունը:
18. Պետական մարմինների առանձին տեսակների գործունեության առանձնահատկությունները:
19. Պետական մարմինների առանձին տեսակների կազմակերպման առանձնահատկությունները:
20. Պետական մարմինների առանձին տեսակների իրավական վիճակի առանձնահատկությունները:
21. Ընտրական իրավունքի հասկացությունը և դրսևորման եղանակները:
22. Ընտրական համակարգի հասկացությունը և դրսևորման եղանակները:
23. Ընտրական համակարգի հասկացությունը և տեսակները:
24. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը:
25. Ընտրական իրավունքի ընդհանուր և հավասար սկզբունքների բովանդակությունը:
26. Ընտրական իրավունքի ուղղակի և գաղտնի քվեարկության սկզբունքների բովանդակությունը:
27. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները:
28. Ընտրություններ նշանակելը:
29. Ընտրողների ցուցակներ կազմելը:
30. Ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր, և տեղամասային կենտրոններ կազմելու կարգը:
31. Ընտրական հանձնաժողովների կազմակերպման կարգը, գործունեությունը և իրավական կարգավիճակը:
32. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմակերպման կարգը, իրավական վիճակը և գործունեությունը:
33. Ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովների կազմակերպման կարգը, իրավական վիճակը և աշխատանքի կազմակերպումը:
34. Թեկնածուի առաջադրումը, գրանցումը և իրավական վիճակը:

35. Թեկնածուի առաջադրման կարգը:
36. Թեկնածուի գրանցման, գրանցումը մերժելու և անվավեր ճանաչելու կարգը:
37. Թեկնածուի իրավական կարգավիճակը:
38. Նախընտրական քարոզչությունը:
39. Ընտրությունների ֆինանսավորումը:
40. Նախընտրական հիմնադրամի ձևավորման և իրացման կարգը:
41. Ընտրությունների ավարտից հետո հիմնադրամում մնացած միջոցները և ընտրագրավը վերադարձնելու հետ կապված խնդիրների լուծման կարգը:
42. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը:
43. Քվեարկության կազմակերպման կարգը:
44. Քվեարկության անցկացման կարգը:
45. Չայները հաշվելու կարգը:
46. Քվեարկության արդյունքները ամփոփելու կարգը:
47. Քվեարկության արդյունքները որոշելու կարգը:
48. Պատասխանատվությունը քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար:
49. ՀՀ Նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում:
50. Պետության գլխի կարգավիճակը պայմանավորող հանգամանքները:
51. ՀՀ Նախագահի ընտրության և պաշտոն զբաղեցնելու կարգը:
52. ՀՀ Նախագահի լիազորությունների դադարման հիմքերը և կարգը:
53. ՀՀ Նախագահի, որպես պետության գլխի, լիազորությունները:
54. ՀՀ Նախագահի լիազորությունները օրենսդիր իշխանության ոլորտում:
55. ՀՀ Նախագահի լիազորությունները արտաքին հարաբերությունների ոլորտում:
56. ՀՀ Նախագահի լիազորությունները կառավարման խնդիրների լուծման ոլորտում:
57. ՀՀ Նախագահի լիազորությունները դատական իշխանության ոլորտում:
58. ՀՀ Նախագահի լիազորությունները զինված ուժերի և արտակարգ իրավիճակների ոլորտում:
59. ՀՀ Նախագահի ակտերը և աշխատակազմը:
60. ՀՀ Նախագահի վետոյի և խորհրդարանը լուծարելու իրավունքը:
61. Պառլամենտարիզմի բովանդակությունը կազմող հիմնական հատկանիշները:
62. ՀՀ օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմինը Ազգային ժողովն է:
63. Աժ կազմակերպման կարգն ու կառուցվածքը:
64. Աժ պատգամավորը հանրապետության ողջ բնակչության ներկայացուցիչն է:
65. Աժ պատգամավորը իր ընտրատարածքի ներկայացուցիչն է Աժ-ում:
66. Պատգամավորի լիազորությունների ծագման և դադարման հիմքերը:
67. Պատգամավորի կարգավիճակը Աժ-ում և ընտրատարածքում:
68. Պատգամավորի գործունեության երաշխիքները:
69. Ազգային ժողովի հանձնաժողովները /կարգավիճակը, կազմակերպման կարգը և աշխատանքի կազմակերպման ձևերը/:
70. Աժ գործունեությունը ֆինանսների ոլորտում:
71. Աժ գործունեությունը արտաքին հարաբերությունների և ազգային անվտանգության ոլորտում:
72. Աժ գործունեությունը պետական մարմինների ձևավորման և պաշտոնատար անձանց նշանակման ոլորտում:
73. Աժ լիազորությունները պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության վերահսկողության ոլորտում:
74. Նստաշրջանը Աժ աշխատանքների կազմակերպման գլխավոր ձևն է:
75. Օրենքների նախագծերի նախապատրաստման կարգը:
76. Օրենքների նախագծերի քննարկման կարգը Ազգային ժողովում:
77. Օրենքների ընդունման, ստորագրման և հրապարակման կարգը:
78. Աժ աշխատակազմը:

79. ՀՀ կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում:
80. ՀՀ կառավարության կազմակերպման կարգն ու կառուցվածքը:
81. ՀՀ կառավարության իրավասությունը կրթության և առողջապահության ոլորտում:
82. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը:
83. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը:
84. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:
85. Դատական իշխանության ընդհանուր սկզբունքները:
86. Դատական իշխանության մարմինների համակարգը և իրավական կարգավիճակը:
87. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը:
88. Դատավորների անկախության երաշխիքները:
89. ՀՀ դատախազության կազմակերպման կարգը և կառուցվածքը:
90. ՀՀ դատախազության իրավական վիճակի սահմանադրական հիմունքները:
91. ՀՀ արդարադատության խորհրդի կազմակերպման կարգը և իրավական կարգավիճակը:
92. Փաստաբանական ծառայության կազմակերպման և գործունեության կարգը:
93. Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության հասկացությունը և հարաբերակցությունը:
94. Սահմանադրական արդարադատության զարգացման փուլերը:
95. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը:
96. Սահմանադրական դատարանի կազմակերպման կարգն ու անկախության երաշխիքները:
97. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը:
98. Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման առանձնահատկությունները:
99. Սահմանադրական դատավարության ընթացակարգի առանձնահատկությունները:
100. Սահմանադրական դատարանի ակտերի ընդունման կարգն ու իրավաբանական ուժը:
101. Տեղական ինքնակառավարման հասկացությունը և բովանդակությունը:
102. Տեղական ինքնակառավարման համակարգը:
103. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տեսակները և բովանդակությունը:
104. Տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացման երաշխիքները: